

ՀՀ Վայոց ձորի մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելության հոկտեմբեր ամսվա արդյունքները

23.10.2018



2018 թվականի հոկտեմբերի 19-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանի մոտ տեղի ունեցավ քաղաքացիների հերթական ընդունելությունը: Ընդունելության էին եկել 25 քաղաքացիներ, որոնցից 4-ը դիմել էին աշխատանքի տեղավորման հարցով, 3-ը՝ հողային վեճերի, 3-ը՝ ոռոգման և խմելու ջրի մատակարարման հետ կապված հարցերով: 5 քաղաքացիներ դիմել էին այլ հարցերով՝ էլեկտրաէներգիայի մատակարարման վերականգման, բնակարանի ժառանգության, վառելափայտի ձեռքբերման, հատուկ կարիքներով 2 երեխաների խնամքի 7 առողջական խնդիրների լուծմանն օժանդակելու հարցերով:

Նշված քաղաքացիների խնդրանքը բավարարելու կամ դրանց լուծմանն օժանդակելու նպատակով, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանը հանձնարարություն է տվել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ դիմումներն ուսումնասիրել և հնարավորության առկայության դեպքում, բավարարել քաղաքացիների խնդրանքը:

Նշենք, որ 10 քաղաքացիներ էլ դիմել էին դրամական աջակցության խնդրանքով: Հարցը գտնվում է քննարկման փուլում: